*«Գրանցված է»*
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
*12 հուլիսի 2004 թ.*
*Պետական գրանցման թիվ 10204178*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

12 հուլիսի 2004 թ. թիվ 100-Ն
ք. Երևան

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻՆ ԱՐՏԱԺԱՄՅԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասով`

***Հրամայում եմ***

Հաստատել հարկադիր կատարողին արտաժամյա ծառայության ներգրավման դեպքերը և ժամանակի հաշվարկման կարգը` համաձայն հավելվածի:

**Դ. Հարությունյան**

**Հավելված**
**ՀՀ արդարադատության նախարարի**
**2004 թ. հուլիսի 12-ի**
**թիվ 100-Ն հրամանի**

## Կ Ա Ր Գ

## ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻՆ ԱՐՏԱԺԱՄՅԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է կատարողական գործողությունների կատարման ընթացքում դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության հարկադիր կատարողներին արտաժամյա ծառայության ներգրավման դեպքերը և ժամանակի հաշվարկը:

2. Ոչ աշխատանքային օրերին, ինչպես նաև աշխատանքային օրվա ավարտից հետո անհապաղ կատարում պահանջող, պարտապանի մեղքով կամ այլ պատճառներով կատարողական գործողությունների կատարումը մնացած օրերին և սահմանված ժամերին անհնարին դարձած կատարողական գործողությունները շարունակվում են մինչև դրանց փաստացի կատարումը:

3. Արտաժամյա ծառայության (աշխատանքի) վերաբերյալ հարկադիր կատարողի վերադասի (բաժնի պետ, վարչության պետ) կողմից կազմվում է համապատասխան զեկուցագիր և ներկայացվում Գլխավոր հարկադիր կատարողի հաստատմանը: Հաստատումից հետո այն ուղարկվում է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության հաշվապահություն՝ համապատասխան հաշվարկներ և վճարումներ կատարելու համար:

4. Արտաժամյա ծառայության համար հարկադիր կատարողին վճարվում է հավելավճար ՀՀ Կառավարության կողմից սահմանված կարգով:

5. Արտաժամյա ծառայության համար, հարկադիր կատարողի ցանկությամբ, վճարվելիք հավելավճարի փոխարեն նրան կարող է տրամադրվել նույն քանակության հանգստյան ժամեր (օրեր):

6. Արտաժամյա ծառայության համար հավելավճարները տրվում են ամիսը մեկ անգամ հարկադիր կատարողի արտաժամյա ծառայության տվյալ ամսվան հաջորդող ամսվա ընթացքում:

**Դ. Հարությունյան**